Ազգ
Azg
armenian daily
2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1996 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, # 185 (1191)

## Ռուսաստանի պատգամավորները դիմեցին Սահմանադրական դատարան

[illegible]

## Ամերիկյան զորքերը Բոսնիայում կմնան եւս 6 ամիս

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, WSJ. [illegible] 22 [illegible]

ԵՐԵՎԱՆ

## Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին

Մեծարգո պարոն նախագահ

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը շնորհավորում է Ձեզ Հայաստանի Հանրապետության նախագահի պաշտոնում վերընտրվելու կապակցությամբ:

Բնեարկելով Ձեր օգտին՝ մեր կուսակցությունը, համակիրները, հանրապետության ազգաբնակչության հետ ակնկալում են խաղաղություն եւ կայունություն, ժողովրդավարության եւ բարեփոխումների զարգացում, լուրջ կադրային փոփոխություններ եւ կարգականոնի հաստատում, ինչը եւ նախանշված է Ձեր նախընտրական ծրագրում եւ ընտրություններից հետո հայ ժողովրդին ուղղված ուղերձում:

Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը հույս է հայտնում, որ դրանց գործնական իրականացումը մեծապես կնպաստի իրավական պետության հաստատմանն ու ամրապնդմանը, ժողովրդի բարեկեցության բարձրացմանը:

Բոլոր ազգանվեր եւ հայրենանվեր գործերում հայտնում ենք մեր աջակցությունը:

ՀՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
01.10.1996 թ.
ք. Երեւան

ՏԱՐԱԾՔ

## Զինվորները հեռացան Հանրապետության հրապարակից

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Շաբաթվա ծերբակալություններից հետո Երեւանի Հանրապետության հրապարակը դատարկվեց զինվորական հսկողությունից: Սակայն մայրաքաղաքի այս հատվածից անհետացան նաեւ մինչ մեկ տարվա վաճառականները, ինչ երեւում, աշխատավորներ, զինվորները, որոնց միայն զբաղմունքը դարձել էր հրապարակի կենտրոնում կանգնելը: Այսօրվա վիճակով մայրաքաղաքի այս հատվածը վերադարձել է իր նախկին տեսքը:

## Երեւանի կենտրոնը կջեռուցվի ի հաշիվ էլեկտրաէներգիայի

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Երեւանի կենտրոնական հատվածը, որը վերջին մի քանի տարիներին ընդհանրապես չի ունեցել կենտրոնացված ջեռուցում, այս ձմռանը նախատեսվում է ջեռուցել ի հաշիվ էլեկտրաէներգիայի: Համաձայն Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության, դրա համար սակայն անհրաժեշտ է ապահովել շուրջօրյա էներգամատակարարում: Ըստ տեղեկատվության, մայրաքաղաքի առանձին հատվածներում բնակիչները հրաժարվում են կենտրոնացված ջեռուցումից բարձր վարձավճարների պատճառով: Նշենք, որ 1 հառ. մետրի համար սահմանված է 1400 դրամ:

## Տարեց մարդու միջազգային օրը

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՓԱՍՏ: Այսօր նշվում է տարեց մարդու միջազգային օրը, սակայն հարկ է նկատել, որ ակնարկ ներից մարդկանց համար ցանկացած օր էլ տարեց մարդու օր է, մինչդեռ միջազգային է անվանված միայն մեկը: Անում է հարցնել, թե ինչ գործ եւ օրվա գներն ինչ որոշ հետագա եզր յունեցող կենսաթոշակ ստացող տարեցը ինչով՝ պետք է ապրի տարվա 364 օրերը, երբ նրա ամենը պաշտպանող օրենքների ու հասարակական ուժերի առաստղություն, մեղմ ասած, այնքան էլ նկատելի չէ: Նշենք նաեւ, որ Երեւանում օրվան նվիրված որեւէ տեսանելի միջոցառում չէր անցկացվում:

ԱՍՈՒԼԻՍ

## Խաչատուր Բեզիրջյան. «Ըստ օրենքի ընտրությունները կարող են անվավեր ճանաչվել միայն հանրապետության տարածքում»

*ԿԸՀ-ի նախագահը ափսոսանք հայտնեց, որ չի հայտնվել Բաբկեն Արարքցյանի տեղում*

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

[illegible]

## Թալիբների անից երեկվա բեռնավիները զինակիցներ կդառնան

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

[illegible]

## Հայաստանի պատվիրակությունը Վաշինգտոնում

ԵՐԵՎԱՆ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ

[illegible]

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐՈՒՄ»

## Համաշարժում Թուրքիայում մարդու իրավունքների խախտումների դեմ

ՀՌԱՄԻ, 1 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ

[illegible]

ԱԶԳ

[illegible]

ԱՆԴՐԱԴԱՐՁ

# Վերադառնալ բնականոն կյանքի

*Հանրապետության նախագահը կատարեց առաջին քայլը: Կլինի՞ երկրորդը...*

[illegible]

Միգուցե հարկավոր է վերադառնալ բնականոն կյանքի: Այլ ելք չկա...

[illegible]

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# Բրիտանական տրանսպորտա-առեւտրական պատվիրակություն է ժամանում Երեւան

Երեւանում բրիտանական դեսպանատան կողմից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ նոյեմբերի 3-ին, Բրիտանական տրանսպորտային սեկտորի առեւտրական առաքելության խումբը այցելելու է Հայաստան, տրանսպորտի նախարար դերկոմս (վիկոնտ) Գոուխենի ղեկավարությամբ: Պատվիրակության կազմում լինելու են բրիտանական տասը առաջնակարգ տրանսպորտային ընկերությունների ներկայացուցիչները, որոնք Հայաստան են ժամանելու անձամբ ծանոթանալու գոյություն ունեցող տրանսպորտային համակարգերի, նրանց հետագա ծրագրերին, պահանջներին եւ որոնելու փոխշահավետ համագործակցության համար հարմար գործընկերներ: Այս առաքելության մեջ ընդգրկված ընկերությունները ունեն գործունեության բավական մեծ ոլորտ, որը ներառում է ճանապարհների, երկաթուղիների եւ կամուրջների շինարարությունը, օդանավակայանների նախագծումը, օդագնացության ծառայությունների զարգացումը, ապահովագրությունը, բեռների առաքումը, արտահանումների եւ ներմուծումների հարցերը, եւ նույնիսկ ավտոհավաքման գործարանի կառուցումը:

Իր մեկնումից առաջ լորդ Գոուխենն ասել է. «Ես հաճույքով եմ առաջնորդում այս առեւտրական առաքելությունը Ադրբեջան, Վրաստան եւ Հայաստան եւ ակնկալում եմ էլ ավելի զարգացնել Մեծ Բրիտանիայի եւ Անդրկովկասի երեք հանրապետությունների միջեւ գոյություն ունեցող քաղաքական եւ առեւտրական հարաբերությունները: Անդրկովկասը աշխարհագրական կարեւոր դիրք է գրավում՝ հանդիսանալով կամուրջ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ: Այն պատրաստ է դառնալ նաեւ կարեւոր տրանսպորտային ճանապարհ ոչ միայն նավթի եւ հարակից նյութերի, այլեւ Չինաստանից եւ Կենտրոնական Ասիայից ապրանքների երկկողմանի փոխադրման համար: Ամուր տրանսպորտային ենթակառույցներ են անհրաժեշտ, որպեսզի առեւտուրը զարգանա որպես տարանցիկ միջանցք, եւ որպեսզի երեք երկրներից յուրաքանչյուրում հաջողությամբ բարգավաճեն արդյունաբերության եւ առեւտրի բոլոր ճյուղերը: Ես հույս ունեմ հեշտացնել գործարար հարաբերությունները բրիտանական ընկերությունների եւ Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի համապատասխան կազմակերպությունների միջեւ»:

ԱՂԵՏԻ ԳՈՏԻ

# Շիրակ. Վերակառուցման աշխատանքների տեղեկագիր

Գյումրիում հրապարակվել է Շիրակի մարզի վերակառուցման աշխատանքների համառոտ տեղեկագիրը, որում ներկայացված են մանրամասներ՝ ըստ մարզում կատարվող շինարարության տարբեր ոլորտների: Ինչպես նշվում է տեղեկագրում, մարզի բնակավայրերի վերականգնումը վերջին տարիներին իրականացվել է հիմնականում վարկերի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցներով: 1996 թ. Շիրակի մարզի բնակավայրերի վերակառուցման համար ծրագրված էր ներդնել 3,5 միլիոն դոլար (40.380 քմ, 532 բնակարան): Հունիս ամսից սկսած աշխատանք է կատարվել բնակարանաշինության, արդյունաբերական, դպրոցական եւ այլ օբյեկտների, էներգետիկ համակարգի վերականգնման ֆինանսական նոր աղբյուրներ գտնելու ուղղությամբ, որի արդյունքը, ըստ տեղեկագրի, եղել է ֆինանսական ներդրումների ծավալների աճը մինչեւ 11,2 մլն դոլար: Պետք է կարծել, որ այս ներդրումների զգալի մասը բաժին կընկնի եկող տարվան:

Երկրաշարժին հաջորդած ութ տարիների ընթացքում առաջին անգամ նոր բնակելի շենք է սկսել կառուցվել Գյումրիի միջուկում՝ Ղաղբանակի թաղամասում, նախկին քանդված շենքերի տեղում: Շենքի նախահաշվային արժեքի 40 տոկոսը ներդնելու են բնակիչները: Այս վերջինն, ի դեպ, այստեղ սկսել է իշխող սկզբունք դառնալ՝ ծանր հարցականներ դնելով նման ֆինանսական միջոցներ չունեցող մեծ թվով անօթեւան ընտանիքների առջեւ: Երեւի նույն սկզբունքով քաղաքի կենտրոնում, Համաշխարհային բանկի վարկի երկրորդ փուլի կանխավճարի հաշվին կվերականգնվեն թվով 6 վթարային բնակելի շենքեր կամ 232 բնակարան: Իսկ «Անի» թաղամասում կիսակառույց վեց շենքերի շինարարությունն ավարտի է հասցվում բացառապես բնակիչների ֆինանսական միջոցներով: Նշված եւ «Արագած» նորակառույց թաղամասում 5 բնակելի շենքեր կառուցվում են հիմնարկ-ձեռնարկությունների ու նրանց կոլեկտիվների անդամների ֆինանսական ներդրումներով, «Անի» թաղամասում Հայ առաքելական եկեղեցու միջոցներով ավարտի է հասցվել եւ օրերս շահագործման հանձնվել 16 բնակարան: Կոմունալ շինարարության օբյեկտներից, մասնավորապես, ավարտվել են Կրասար-Գյումրի ջրատարի առաջին հերթի աշխատանքները եւ սկսվել է երկրորդ հերթի շինարարությունը: Ջրատարը քաղաքին մեկ վայրկյանում լրացուցիչ կտա 400 լիտր խմելու ջուր:

Դպրոցաշինությունը վերջին տարիներին Շիրակի հասկաթեւ մարզկենտրոնի վերականգնողական աշխատանքների թույլ տեղերից մեկն է եղել, եւ ուրախալի է, որ այժմ գործի դրվող ծրագրում դրան զգալի տեղ է տրված: Գյումրիում ընթացքի մեջ են տարբեր աղբյուրների ֆինանսավորմամբ ավելի քան 3000 աշակերտական տեղով դպրոցների կառուցման կամ վերակառուցման: Մարխար գյուղում՝ 300 տեղով դպրոցի շինարարության աշխատանքները: Արդյունաբերական օբյեկտների շինարարության գծով շարունակվում է եւ մինչեւ տարեվերջ պետք է ավարտվի մարզկենտրոնի յոթ ձեռնարկությունների՝ «Անալիտսարք», «Էլեկտրակենցաղսարք», «Հայէլեկտրակոնդենսատոր» գործարանների, տեքստիլ կարի արտադրական միավորման վերականգնումը Համաշխարհային բանկի վարկի հաշվին: Ճանապարհաշինական աշխատանքների թվում, ինչպես հայտնի է, Աշոցք-Ջավախք ճանապարհահատվածի շինարարությունն է, ընդհանուր առմամբ նախատեսվում է իրականացնել 80 կիլոմետր ճանապարհի շինարարական-վերականգնողական աշխատանք, որի համար ծախսվելու է 2 միլիոն դոլար:

Տեղեկագիրը [illegible] նաեւ մարզի էներգետիկ կարգի, կապի շինարարության, այլ կառուցապատումների մասին: Նշվում է, որ վերակառուցման աշխատանքներում ուրույն տեղ է զբաղեցնում Գյումրիի պատմաճարտարապետական արժեք ներկայացնող կառույցների վերականգնումը: Վերջին շրջանում շահագործման են հանձնվել քաղաքի կենտրոնական բաղնիքը, քաղաքային գրադարանը, մարզադաշտը, օրերս նաեւ [illegible] կինոթատրոնը: Ավարտվել է Արմենի [illegible] ակադեմիայի շենքի վերակառուցումը:

Ա. Մ.

